



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՆԱԽԱԳԱՀ

« 10 » *հոկտեմբերի* 2022թ.

№ 1190-Լ

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ  
ՆԱԽԱԳԱՀԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի ԹԻՎ 34-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 14-րդ և 16-րդ ենթակետերով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2020 թվականի հունվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 34-Լ հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության (այսուհետ՝ Վարչություն) կառուցվածքում կատարել հետևյալ անվանափոխությունները.

ա. Վարչության ընթացիկ հսկողության տարածքային թիվ 1 (Արաբկիրի) բաժինը անվանափոխել փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 1 բաժնի,



- բ. Վարչության ընթացիկ հսկողության տարածքային թիվ 2 (Էրեբունու) բաժինը անվանափոխել փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 2 բաժնի,
- գ. Վարչության ընթացիկ հսկողության տարածքային թիվ 3 (Կենտրոնի) բաժինը անվանափոխել փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 3 բաժնի,
- դ. Վարչության ընթացիկ հսկողության տարածքային թիվ 4 (Մաշտոցի) բաժինը անվանափոխել փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 4 բաժնի,
- ե. Վարչության ընթացիկ հսկողության տարածքային թիվ 5 (Նոր Նորքի) բաժինը անվանափոխել փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 5 բաժնի,
- զ. Վարչության ընթացիկ հսկողության տարածքային թիվ 6 (Շենգավիթի) բաժինը անվանափոխել փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 6 բաժնի,
- է. Վարչության ընթացիկ հսկողության տարածքային թիվ 7 (Արագածոտնի) բաժինը անվանափոխել փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 7 բաժնի,
- ը. Վարչության ընթացիկ հսկողության տարածքային թիվ 8 (Արմավիրի) բաժինը անվանափոխել փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 8 բաժնի,
- թ. Վարչության ընթացիկ հսկողության տարածքային թիվ 9 (Արարատի) բաժինը անվանափոխել փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 9 բաժնի,
- ժ. Վարչության ընթացիկ հսկողության տարածքային թիվ 10 (Գեղարքունիքի) բաժինը անվանափոխել փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 10 բաժնի,
- ժա" Վարչության ընթացիկ հսկողության տարածքային թիվ 11 (Շիրակի) բաժինը անվանափոխել փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 11 բաժնի,
- ժբ" Վարչության ընթացիկ հսկողության տարածքային թիվ 12 (Վայոց Ձորի) բաժինը անվանափոխել փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 12 բաժնի,
- ժգ" Վարչության ընթացիկ հսկողության տարածքային թիվ 13 (Տավուշի) բաժինը անվանափոխել փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 13 բաժնի,
- ժդ" Վարչության ընթացիկ հսկողության տարածքային թիվ 14 (Սյունիքի) բաժինը անվանափոխել փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 14 բաժնի,
- ժե" Վարչության ընթացիկ հսկողության տարածքային թիվ 15 (Կոտայքի) բաժինը անվանափոխել փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 15 բաժնի,
- ժզ" Վարչության ընթացիկ հսկողության տարածքային թիվ 16 (Լոռու) բաժինը անվանափոխել փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 16 բաժնի,



ժէ" Վարչության ընթացիկ հատուկ հսկողության թիվ 1 բաժինը անվանափոխել միջին հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 1 բաժնի,

ժը" Վարչության ընթացիկ հատուկ հսկողության թիվ 2 բաժինը անվանափոխել միջին հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 2 բաժնի,

ժթ" Վարչության ընթացիկ հատուկ հսկողության թիվ 3 բաժինը անվանափոխել միջին հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 3 բաժնի,

ի" Վարչության ընթացիկ հատուկ հսկողության թիվ 4 բաժինը անվանափոխել խոշոր հարկ վճարողների ընթացիկ հսկողության բաժնի,

իա" Վարչության տեղեկատվական աջակցման բաժինը անվանափոխել ստուգումների, ուսումնասիրությունների կազմակերպման և աջակցման բաժնի:

2) Հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

11/10/2022



X

ԱՐՏՅՈՄ ՍՄԲԱՏՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Signed by: SMBATYAN ARTYOM 3210860416

ԱՐՏՅՈՄ ՍՄԲԱՏՅԱՆ

Պաշտոնական հրապարակման օրը՝ 11 նոյեմբերի 2022 թվական:



**Հավելված**

Հայաստանի Հանրապետության  
պետական եկամուտների կոմիտեի նախագահի  
2022 թվականի հոկտեմբերի 10 N 1190 -Լ հրամանի

**«Հավելված**

Հայաստանի Հանրապետության  
պետական եկամուտների կոմիտեի նախագահի  
2020 թվականի հունվարի 17-ի N 34-Լ հրամանի

## **ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ**

#### **I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որը կազմավորվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշման համաձայն:

2. Վարչությունն իր գործառույթներն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով, Կոմիտեի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, Կոմիտեի նախագահի (այսուհետ՝ Նախագահ) և Վարչության աշխատանքները համակարգող Նախագահի տեղակալի հանձնարարականներով:

3. Վարչությունն իր գործառույթների շրջանակներում համագործակցում է Կոմիտեի այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ:

4. Վարչության անմիջական ղեկավարումն իրականացնում է Վարչության պետը, իսկ նրա բացակայության դեպքում՝ Վարչության պետի տեղակալներից մեկը: Վարչության



աշխատանքների ընդհանուր համակարգումը և ղեկավարումն իրականացնում է Նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ Նախագահի տեղակալը:

5. Վարչության բաժինների աշխատանքները ղեկավարում և կազմակերպում են բաժինների պետերը:

6. Վարչության հարկային ծառայողների օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքները և պարտականությունները ամրագրվում են Նախագահի կողմից հաստատված հարկային ծառայության տվյալ պաշտոնի նկարագրով:

## II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների ապահովումը և Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգությանը նպաստելը:

2. Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի սկզբունքներին և հարկային հարաբերությունները կարգավորող, ինչպես նաև հարկային մարմնին լիազորություններ վերապահող այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան՝ հարկային մարմնի համար սահմանված պարտականությունների և գործառույթների կատարումը, լիազորությունների իրականացումը:

3. Հարկային հարցերին առնչվող միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարումը և իրավունքների իրականացումը:

4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ խնդիրների իրականացումը:

5. Հարկային ընթացիկ հսկողության իրականացում:

6. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության, հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերի՝ հարկային պարտավորությունների գծով պահանջների խախտման համար օրենքով սահմանված պատասխանատվության կիրառում:

7. Հարկային պարտավորությունների կատարման ապահովում, հարկերի և այլ վճարների հավաքման կազմակերպում:

8. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ընթացիկ հսկողություն իրականացնելու նպատակով տնտեսավարող



սուբյեկտների մոտ օրենքով սահմանված կարգով ստուգումների և ուսումնասիրությունների իրականացում:

### III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1. Փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 1 բաժին,
2. Փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 2 բաժին,
3. Փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 3 բաժին,
4. Փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 4 բաժին,
5. Փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 5 բաժին,
6. Փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 6 բաժին,
7. Փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 7 բաժին,
8. Փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 8 բաժին,
9. Փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 9 բաժին,
10. Փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 10 բաժին,
11. Փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 11 բաժին,
12. Փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 12 բաժին,
13. Փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 13 բաժին,
14. Փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 14 բաժին,
15. Փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 15 բաժին,
16. Փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 16 բաժին,
17. Միջին հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 1 բաժին,
18. Միջին հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 2 բաժին,
19. Միջին հարկ վճարողների ընթացիկ հսկողության թիվ 3 բաժին,
20. Խոշոր հարկ վճարողների ընթացիկ հսկողության բաժին,
21. Ստուգումների, ուսումնասիրությունների կազմակերպման և աջակցման բաժին:

### IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ ԸՍՏ ԲԱԺԻՆՆԵՐԻ

1. **Փոքր հարկ վճարողների ընթացիկ հսկողության բաժինների գործառույթներն են՝**

1) Փոքր հարկ վճարողների հարկային կարգապահության գծով վարչարարական միջոցառումների իրականացում:



2) Փոքր հարկ վճարողների մոտ թեմատիկ հարկային ստուգումների և արտագնա ուսումնասիրությունների (բացառությամբ արտագնա թեմատիկ ուսումնասիրությունների) իրականացում:

3) Փոքր հարկ վճարողների հնարավոր հարկային իրավախախտումների գծով՝ հարկային պարտավորությունների նախնական հաշվարկների իրականացում, արձանագրությունների կազմում և հետագա ընթացքի ապահովում:

4) Փոքր հարկ վճարողների կողմից պիտանիության (պահպանման) ժամկետում վերջնական սպառողներին չօտարված, դրոշմապիտակներով դրոշմավորված ապրանքների դուրսգրման գործընթացին մասնակցություն:

5) Վերակազմավորվող և լուծարման գործընթաց սկսած փոքր հարկ վճարողների համալիր հարկային ստուգումներին մասնակցություն (ըստ անհրաժեշտության):

6) Փոքր հարկ վճարողների արտագնա թեմատիկ ուսումնասիրություններին մասնակցություն (ըստ անհրաժեշտության):

7) Խոշոր կամ միջին հարկ վճարողների թեմատիկ հարկային ստուգումներին և արտագնա ուսումնասիրություններին մասնակցություն (ըստ անհրաժեշտության):

8) Հարկային մարմնի ղեկավարի, Վարչության աշխատանքները համակարգող հարկային մարմնի ղեկավարի տեղակալի և Վարչության պետի հանձնարարականների շրջանակներում հարկերի հավաքագրմանն ու հարկային կարգապահությանն ուղղված այլ աշխատանքների իրականացում:

## **2. Միջին հարկ վճարողների ընթացիկ հսկողության բաժինների գործառույթներն են՝**

1) Միջին հարկ վճարողների հարկային կարգապահության գծով վարչարարական միջոցառումների իրականացում:

2) Միջին հարկ վճարողների մոտ թեմատիկ հարկային ստուգումների և արտագնա ուսումնասիրությունների (բացառությամբ արտագնա թեմատիկ ուսումնասիրությունների) իրականացում:

3) Միջին հարկ վճարողների հնարավոր հարկային իրավախախտումների գծով՝ հարկային պարտավորությունների նախնական հաշվարկների իրականացում, արձանագրությունների կազմում և հետագա ընթացքի ապահովում:



4) Միջին հարկ վճարողների կողմից պիտանիության (պահպանման) ժամկետում վերջնական սպառողներին չօտարված, դրոշմապիտակներով դրոշմավորված ապրանքների դուրսգրման գործընթացին մասնակցություն:

5) Վերակազմավորվող և լուծարման գործընթաց սկսած միջին հարկ վճարողների համալիր հարկային ստուգումներին մասնակցություն՝ ըստ անհրաժեշտության:

6) Միջին հարկ վճարողների արտագնա թեմատիկ ուսումնասիրություններին մասնակցություն (ըստ անհրաժեշտության):

7) Փոքր կամ խոշոր հարկ վճարողների թեմատիկ հարկային ստուգումներին և արտագնա ուսումնասիրություններին մասնակցություն (ըստ անհրաժեշտության):

8) Հարկային մարմնի ղեկավարի, Վարչության աշխատանքները համակարգող հարկային մարմնի ղեկավարի տեղակալի և Վարչության պետի հանձնարարականների շրջանակներում հարկերի հավաքագրմանն ու հարկային կարգապահությանն ուղղված այլ աշխատանքների իրականացում:

### **3. Խոշոր հարկ վճարողների ընթացիկ հսկողության բաժնի գործառույթներն են՝**

1) Խոշոր հարկ վճարողների հարկային կարգապահության գծով վարչարարական միջոցառումների իրականացում:

2) Խոշոր հարկ վճարողների մոտ թեմատիկ հարկային ստուգումների և արտագնա ուսումնասիրությունների (բացառությամբ արտագնա թեմատիկ ուսումնասիրությունների) իրականացում:

3) Խոշոր հարկ վճարողների հնարավոր հարկային իրավախախտումների գծով՝ հարկային պարտավորությունների նախնական հաշվարկների իրականացում, արձանագրությունների կազմում և հետագա ընթացքի ապահովում:

4) Խոշոր հարկ վճարողների կողմից պիտանիության (պահպանման) ժամկետում վերջնական սպառողներին չօտարված, դրոշմապիտակներով դրոշմավորված ապրանքների դուրսգրման գործընթացին մասնակցություն:

5) Վերակազմավորվող և լուծարման գործընթաց սկսած խոշոր հարկ վճարողների համալիր հարկային ստուգումներին մասնակցություն (ըստ անհրաժեշտության):

6) Խոշոր հարկ վճարողների արտագնա թեմատիկ ուսումնասիրություններին մասնակցություն (ըստ անհրաժեշտության):





7) Փոքր կամ միջին հարկ վճարողների թեմատիկ հարկային ստուգումներին և արտագնա ուսումնասիրություններին մասնակցություն (ըստ անհրաժեշտության):

8) Հարկային մարմնի ղեկավարի, Վարչության աշխատանքները համակարգող հարկային մարմնի ղեկավարի տեղակալի և Վարչության պետի հանձնարարականների շրջանակներում հարկերի հավաքագրմանն ու հարկային կարգապահությանն ուղղված այլ աշխատանքների իրականացում:

#### **4. Ստուգումների, ուսումնասիրությունների կազմակերպման և աջակցման բաժնի գործառույթներն են՝**

1) Հարկ վճարողների մոտ հսկողական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ հանձնարարագրերի, հրամանների նախապատրաստում և հետագա գործընթացի կազմակերպում:

2) Վերակազմավորվող և լուծարման գործընթաց սկսած հարկ վճարողների մոտ հարկային ստուգումների կազմակերպում, դրանց իրականացում, անհրաժեշտության դեպքում՝ հարցումների իրականացման, տեղեկատվության փոխանակման գործընթացի ապահովում:

3) Արտագնա թեմատիկ ուսումնասիրությունների և Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտների՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացած եկամուտներից վճարված հարկի գումարի վերադարձի կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի դրույթներին համապատասխան օտարերկրյա պետության լիազորված մարմնի հարցումներին պատասխանելու նպատակով իրականացվող ուսումնասիրությունների կազմակերպում, իրականացում:

4) Պիտանելիության ժամկետ ունեցող դրոշմավորված ապրանքների դուրսգրման գործընթացի կազմակերպման աշխատանքների ապահովում:

5) Հարկային եկամուտների հավաքագրման ուղղությամբ կանխատեսումների իրականացման և հետագա իրացման աշխատանքների կազմակերպում:

6) Հարկ վճարողների մոտ ընթացիկ հսկողական աշխատանքների և հարկային վարչարարության իրականացման նպատակով անհրաժեշտ տեղեկատվության ձևավորում և տրամադրում:

7) Հարկային եկամուտների հավաքագրման գործընթացում առաջացող ոլորտային և այլ խնդիրների իրազեկման գործընթացի կազմակերպում և ապահովում:



8) Վարչության բաժինների և կոմիտեի այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ տեղեկատվության փոխանակման ապահովում:»

